ՈՐՈՇՈՒՄ
Ն ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ԾԱԾԿԱԳՐՈՎ

Գնման ընթացակարգի մասնակից «Մարիետա Աբրահամի Սարգսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու մասին

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից Ն ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 2025 թվականի նոյեմբերի 12-ին «Մարիետա Աբրահամի Սարգսյան» ԱՁ-ին ուղարկվել է Հավելված 1.1-ի շտկման ծանուցում, սակայն նոյեմբերի 14-ին՝ նիստի գնահատման օրը, շտկում չենք ստացել, ինչը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորության խախտում:

Համաձայն ընթացակարգի հրավերի 8.13 կետի՝

8.13 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ

դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում.

- եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները՝ այդ թվում՝ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված անձը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ /կատարող/, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե

ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում.

Ելնելով վերոգրյալից՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի.

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102	1	Թեթև կոնտեյներներ	24000000	ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	47942377	Արարատի մարզ, գյուղ Սուրենավան Արցախի փ , տուն 49	14.11.2025թ.	«Հայանտառ»ՊՈԱԿ	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ
	2	շրջանակներ	17640000	ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	47942377	Արարատի մարզ, գյուղ Սուրենավան Արցախի փ , տուն 49	14.11.2025թ.	«Հայանտառ»ՊՈԱԿ	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ
	3	շրջանակներ	5750000	ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	47942377	Արարատի մարզ, գյուղ Սուրենավան Արցախի փ , տուն 49	14.11.2025թ.	«Հայանտառ»ՊՈԱԿ	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ

Կից ներկայացնում եմ «Մարիետա Աբրահամի Սարգսյան» ԱՁ-ի N ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտի և 2025թ նոյեմբերի 14-ի ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2025/102 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N2 արձանագրության պատճենները:

Սույն որոշման բնօրինակը ուղարկել ֆինանսների նախարարություն, պատճենը՝ «Մարիետա Աբրահամի Սարգսյան» ԱՁ -ին:

Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

15.12.2025

Հարգանքով՝
ժամանակավոր պաշտոնակատար X _____ Գարեգին Միրզոյան

Подписано: MIRZOYAN GAREGIN 3807710094